ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2020 ԹԹ.

Հաստատում եմ

ամբիոնի վարիչ՝ Հ. Մարզպանյան

29. 01. 17

ԵՐԵՎԱՆ – 2017

ԱՄԲԻՈՆԻ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի 2017-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը բխում է և համահունչ է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի 2017-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից:

Ամբիոնը Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի անբաժանելի մասն է, որն ամբողջությամբ իրագործում է ակադեմիայի ռազմավարական ծրագրերից բխող խնդիրները: Ամբիոնը ներառված է ակադեմիայի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կազմում:

ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնը կազմավորվել է 2002թ: 2002-2003 ուսումնական տարուց Ակադեմիայում մեկնարկել է 5-ամյա բարձրագույն կրթության կրթական ծրագիրը, 2003-2004 ուսումնական տարում ներդրվեց կրթության 2-րդ աստիճանը՝մագիստրատուրան, 2004թ.-ից՝ բակալավրիատի 4-ամյա կրթական ակադեմիական ծրագիրը: 2008-2009 ուսումնական տարում Ակադեմիայում ներդրվեց եռաստիճան կրթական համակարգը:

Ամբիոնի նպատակներն ու խնդիրները հինվում են մասնագիտական կադրերի պատրաստման բնագավառում միջազգային լավագույն փորձի վրա և բխում են ՀՀ տնտեսության պահանջներից, կրթության նկատմամբ կոմպոնենտային-կողմնորոշիչ մոտեցումից, ինչպես նաև ակադեմիայի հետաքրքրություններից:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի գլխավոր նպատակն է ապահովել անհրաժեշտ հանրակրթական և մասնագիտական հագեցվածություն ունեցող կրթական ակադեմիական ծրագրերի իրականացումը, պատրաստել ՀՀ և տարածաշրջանային աշխատաշուկաների պահանջներին համապատասխանող կառավարման և միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտների բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներ:

Այդ նպատակն ապահովվում է «Տնտեսագիտություն» և «Կառավարում» մասնագիտություններով բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական մակարդակներում անհրաժեշտ մասնագիտական հագեցվածություն ունեցող ակադեմիական ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ուսումնական ծրագրերի

ամբողջական իրականացումն ուսանողներին հնարավորություն է ընձեռում հիմնարար գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերել տնտեսագիտության և կառավարման ոլորտների բազմաբնույթ խնդիրների լուծման համար՝ ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Նշված մասնագիտություններով լիարժեք բարձրագույն կրթության ստացումն ընդլայնում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները և կարիերային աճը:

Ամբիոնն իրագործում է նաև հետևյալ նպատակները.

- Կառավարման և տնտեսագիտության տարբեր ոլորտների մասնագետների համար կրթական կարճաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում,
- համագործակցություն ՀՀ-ում տնտեսության և կառավարման բնագավառի համապատասխան պետական մարմինների հետ, համատեղ խորհրդատվությունների և բաց դասերի կազմակերպում,
- համագործակցություն ՀՀ տնտեսության մասնավոր հատվածի հետ, փորձառու գործարարների ներգրավում կրթական գործընթացի մեջ,
- ակտիվ մասնակցություն մասնագիտացված ցուցահանդեսներին,
- ուսանողների կազմակերպված ժամանցի հնարավորության ստեղծում:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնը իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը.

1. Բակալավրիատի առկա ուսուցում: Բակալավրի «Տնտեսագիտություն» և «Կառավարում» մասնագիտություններով կրթական ակադեմիական ծրագրերով նախատեսված առկա ուսումնառության տևողությունն է 4 տարի /8 կիսամյակ/: Պարապմունքներն անց են կացվում շաբաթական միջինում 28 ակադեմիական ժամ ծանրաբեռնվածությամբ: Տնտեսագիտության և կառավարման ոլորտներում գործնական գիտելիքների և հմտությունների ձեռք բերման նպատակով ուսանողը ուսումնառության ընթացքում երկու անգամ ուղարկվում է պրակտիկայի՝ ուսումնա-արտադրական և նախադիպլոմային, յուրաքանչյուրը՝ 4 շաբաթ տևողությամբ: Ուսումնառությունն ավարտվում է ամփոփիչ ատեստավորման քննություններով և/կամ ավարտական աշխատանքի պաշտպանությամբ:

2. **Բակալավրիատի հեռակա ուսուցում:** Բակալավրի կրթական ակադեմիական ծրագրի հեռակա ուսուցման տևողությունն է 5 տարի /10 կիսամյակ/: Ծրագրով նախատեսված լսարանային պարապմունքները կազմակերպվում են տարին երկու անգամ առաջին և երկրորդ կիսամյակներում: Դասընթացների շաբաթական ծանրաբեռնվածությունը կազմում է 24 ակադեմիական ժամ:

3. **Մագիստրատուրայի առկա ուսուցում:** Մագիստրատուրայի «Տնտեսագիտություն» /մասնագիտացումը՝ Միջազգային բիզնես/ և «Կառավարում» /մասնագիտացումը՝ Գործարար կառավարում/ մասնագիտություններով կրթական ակադեմիական ծրագրերով նախատեսված ուսումնառության տևողությունն է 2 տարի /4 կիսամյակ/: Պարապմունքներն անց են կացվում շաբաթական միջինում 16 ակադեմիական ժամ ծանրաբեռնվածությամբ, բոլոր աշխատանքային օրերին:

4. **Մագիստրատուրայի հեռակա ուսուցում:** Մագիստրատուրայի կրթական ակադեմիական ծրագրով նախատեսված ուսումնառության տևողությունն է 2.5 տարի /5 կիսամյակ/: Պարապմունքներն անց են կացվում շաբաթական միջինում 25 ակադեմիական ժամ ծանրաբեռնվածությամբ, բոլոր աշխատանքային օրերին: Ծրագրով նախատեսված լսարանային պարապմունքները կազմակերպվում են տարին երկու անգամ առաջին և երկրորդ կիսամյակներում:

5. **Ասպիրանտուրայի առկա ուսուցում:** Ասպիրանտուրայի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» և Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտություններով կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության տևողությունն է 3 տարի /6 կիսամյակ/: Պարապմունքներն անց են կացվում տարին երկու անգամ առաջին և երկրորդ կիսամյակներում՝ շաբաթական միջինում 20 ակադեմիական ժամ ծանրաբեռնվածությամբ:

6. **Ասպիրանտուրայի հեռակա ուսոցում և հայցորդության համակարգ:** Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման և հայցորդության համակարգի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» և Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտություններով կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության տևողությունն է 4 տարի /8 կիսամյակ/: Պարապմունքներն անց են կացվում տարին երկու անգամ առաջին և երկրորդ

կիսամյակներում՝ շաբաթական միջինում 20 ակադեմիական ժամ ծանրաբեռնվածությամբ:

Միաժամանակ ամբիոնն ունի մասնագիտական խնդիրներ՝ պայմանավորված դասընթացների և դասավանդվող առարկաների առանձնահատկություններով ու բնութով:

Ամբիոնում աշխատում են գիտության դոկտոր պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, դոցենտներ:

Ամբիոնում գիտական հետազոտություններ են կատարվում տնտեսության և կառավարման բնագավառների բոլոր ուղղություններով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ

ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի կողմից բակալավրիատում իրականացվող կրթական ծրագրերը ուսանողներին ընձեռում են հետևյալ հնարավորությունները.

- ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ տնտեսագիտության և կառավարման հիմնարար տեսությունների, ժամանակակից հայեցակարգերի և զարգացման ուղղությունների վերաբերյալ,
- ձևավորել անհրաժեշտ ունակություններ և հմտություններ տնտեսության և նրա առանձին ոլորտների կառավարման, գործարարության կազմակերպման և զարգացման բնագավառում,
- ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և որոշակի փորձառություն տնտեսության կազմակերպման և կառավարման ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման համար:

Բակալավրիատի շրջանավարտները կարող են զբաղեցնել հանրային կառավարման, գործարարության կազմակերպման ու ղեկավարման համակարգերում կառավարչական անձնակազմի միջին օղակների զանազան պաշտոններ:

Մագիստրատուրայի կրթական ծրագրերը շրջանավարտներին ընձեռում են հետևյալ հնարավորությունները.

- ստանալ խորը և արդիական գիտելիքներ տնտեսության տարբեր ճյուղերում որակյալ ու բարձրակարգ տնտեսագետներ և կառավարիչներ դառնալու համար,
- մասնագիտանալ գործարար կառավարման և միջազգային գործարարության կոնկրետ բնագավառում,
- իրականացնել հետազոտություններ գործարար կառավարման և միջազգային գործարարության տեսական ու գործնական հիմնախնդիրների վերաբերյալ,
- ուսումը համատեղել աշխատանքի հետ:

Մագիստրատուրայի շրջանավարտները կարող են զբաղեցնել հանրային կառավարման, գործարարության կազմակերպման ու ղեկավարման համակարգերում կառավարչական անձնակազմի բարձր օղակների պաշտոնները:

Ասպիրանտուրայի /հայցորդության համակարգի/ կրթական ծրագրերը շրջանավարտներին ընձեռում են հետևյալ հնարավորությունները.

- իրականացնել գիտական հետազոտություններ գործարար կառավարման և միջազգային գործարարության տեսական ու գործնական արդի հիմնախնդիրների վերաբերյալ,
- ձեռք բերել խորը, արդիական գիտելիքներ, հետազոտական հմտություններ և փորձ, ինչպես նաև՝ գիտական աստիճան տնտեսության տարբեր ոլորտներում պահանջվող բարձրակարգ մասնագետներ դառնալու համար
- ընդգրկվել դասախոսական աշխատանքում,
- ուսումը համատեղել աշխատանքի հետ:

Ասպիրանտուրայի /հայցորդության համակարգի/ շրջանավարտները կարող են զբաղեցնել հանրային կառավարման, գործարարության կազմակերպման ու ղեկավարման համակարգերում կառավարչական անձնակազմի բարձրագույն օղակների պաշտոնները, բուհական և ակադեմիական համակարգերի գիտական ու գիտակրթական գործունեության հաստիքները:

ԱՄԲԻՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի առաքելությունն է՝ *տնտեսության և կառավարման բնագավառներում ժամանակակից և միջազգային չափանիշներին համապատասխան աշխատաշուկայում մրցունակ, կոմպետենտ, նախաձեռնող, ստեղծագործող բարձրորակ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, կրթական և հետազոտական նորարարական ժամանակակից մեթոդների կիրառմամբ:*

ԱՄԲԻՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. **Ուսումնական գործընթացի կազմակերպման բնագավառում**.

   ա/ նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրում և զարգացում

   բ/ ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում,

   գ/ ուսանողների ինքնուրույն աշխատանքների հայեցակարգի մշակում, իրականացում, ուսուցման բոլոր փուլերում ստուգման ձևերի կատարելագործում,

   դ/ ուսանողների գործնական աշխատանքների ապահովում:

2. **Ուսումնամեթոդական գործընթացի ապահովման բնագավառում.**

   ա/ ուսումնամեթոդական միասնական բազայի ստեղծում, որն ուսումնական գործընթացը ամբողջությամբ կապահովի ուսումնամեթոդական նյութերով,

   բ/ էլեկտրոնային եղանակով ուսումնական գործընթացի ապահովում:

3. **Գիտական աշխատանքների բնագավառում**.

   ա/ ամբիոնի մասնագիտացման ուղղությունների շրջանակներում գիտական և կիրառական հետազոտությունների զարգացում և գիտահետազոտական բազայի ձևավորում,

   բ/ հետազոտական աշխատանքներում ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ակտիվ ներգրավում:

4. **Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման բնագավառում.**

ա/ամբիոնի մտավոր ներուժի մեծացում՝ որակավորման մակարդակի մշտական բարձրացման ճանապարհով,

բ/ ակտիվ մասնակցություն միջազգային, հանրապետական, ինչպես նաև մարզային նորարարական ծրագրերին և նախագծերին:

5. **Միջազգային համագործակցության բնագավառում.**

ա/ միջազգային համագործակցության ակտիվ զարգացում,

բ/ ակտիվ մասնակցություն միջազգային, հանրապետական, մարզային նորարարական ծրագրերին և նախագծերին:

6. **Ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքների բնագավառում.**

ա/ ամբիոնում կրթական խորհրդատուների և կուրսղեկների աշխատանքների ակտիվացում և զարգացում:

7. **Որակի ապահովման և կառավարման բնագավառում**

ա/ որակի կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրագործում:

բ/ գործնական նշանակության գիտելիքների խորացում:

ԱՄԲԻՈՆՆ ԻՐՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- կառավարման և միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտների մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական պլանների մշակում և իրականացում,
- ուսումնական պլաններով նախատեսված առարկայական ծրագրերի և կրթական մոդուլների կենսագործման համար անհրաժեշտ բարձրակարգ գիտամանկավարժական կադրերի ընտրություն, պատրաստում և վերապատրաստում,
- համագործակցություն ՀՀ և արտասահմանյան բուհերի և այլ գիտական հաստատությունների հետ՝ համատեղ կրթական և հետազոտական գործունեության, ինչպես նաև՝ արտածրագրային միջոցառումների իրականացման նպատակով,
- դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, օժանդակ, էլեկտրոնային և այլ ուսումնական նյութերի պատրաստում և տրամադրում ուսանողությանը,
- սերտ համագործակցություն ՀՀ տնտեսության պետական և մասնավոր հատվածների գործատուների հետ, առանձին կրթական մոդուլների համատեղ կենսագործման նպատակով,
- գործարար աշխարհից հմուտ մասնագետների ներգրավում կրթական գործընթացում՝ հատկապես ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների կազմակերպման նպատակով,
- ակտիվ մասնակցություն ներբուհական, հանրապետական և միջազգային գիտաժողովներին, բուհերի աշխատակիցների համար կազմակերպվող մեթոդական սեմինարներին, մասնագիտացված ցուցահանդեսներին և տոնավաճառներին,
- ուսանողների կազմակերպված ժամանցի և ակտիվ հանգստի համար անհրաժեշտ հնարավորությունների ապահովում:

ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Տնտեսության և կառավարման ոլորտների զարգացման ժամանակակից միտումների համակցում դասական ակադեմիական կրթության հիմունքների հետ:
2. Աշխատաշուկայի պահանջների փոփոխություններին արագ և ճկուն արձագանքում:
3. Տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ինտեգրացում:
4. Աշխարհի առաջատար բուհերի համանուն կրթական ծրագրերի համեմատական վերլուծության հիման վրա մասնագիտական նոր կոմպետենցիաների ձևավորում:
5. Մանկավարժական և հետզոտական գործունեության նկատմամբ միջառարկայական, համակարգային մոտեցում:
6. Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպում՝ գիտական, ուսումնական և մասնագիտական ուղղվածության ներառմամբ:
7. Կրթական գործընթացի անհատականացում:
8. Մասնագիտական կրթական ծրագրերի արտաքին և ներքին շահառուների պահանջմունքների ուսումնասիրություն և վերլուծություն, կարիքների բացահայտում:
9. Ամբիոնի մրցակցային առավելությունների զարգացում:

ԱՄԲԻՈՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Բակալավրիատի ուսումնական ծրագրերի կատարելագործում, ուսումնամեթոդական ապահովվածության զարգացում:

Միջոցառում՝ ուսումնամեթոդական աշխատանք.

- Ուսումնական պլանների մշակում և շտկում:
- Ուսումնական պարապմունքների նախապատրաստում և անցկացում:
- Մեթոդական մշակումների տպագրություն:

Միջոցառում՝ ուսումնական գործընթացում առաջավոր կրթական տեխնոլոգիաների կիրառում.

- Ժամանակակից ծրագրային ապահովում Հեռավար ուսուցման ձևերի միջոցով:
- Համակարգչային թեստավորումը որպես գիտելիքների միջանկյալ և ամփոփիչ ստուգման ձև:

Միջոցառում՝ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում և որակավորման բարձրացում.

- Պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների ամենամյա բարձրացում վերապատրաստումների միջոցով
- Պրոֆեսորադասախոսական կազմի ուսուցում. որակավորման բարձրացման դասընթացներ:

Խնդիր 2. Գիտական և գիտամանկավարժական նորարարական ծրագրերի ապահովում և զարգացում

Միջոցառում՝ գիտահետազոտական աշխատանք.

- Գիտահետազոտական թեմաների մրցույթների մասնակցություն:
- Մենագրությունների, ուսումնական ձեռնարկների և հոդվածների տպագրություն:
- Գիտաժողովների կազմակերպում և մասնակցություն: